ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 4301-Ա «07» նոյեմ 2024թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 29-Ի Հ.7149-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» օրենքի 10-րդ հոդվածով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ մասով, 34-րդ հոդվածով և հիմք ընդունելով Երևանի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի տեղակալ, ղեկավարի ժամանակավոր պաշտոնակատարի 18.10.2024թ. N Ն/61598-24 զեկուցագիրը.

1. Երևանի քաղաքապետի 2009 թվականի հուլիսի 29-ի «Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» հ.7149-Ա որոշման 1-ին կետի 1.32-րդ ենթակետով հաստատված N 27-րդ հավելվածի.

1) 10-րդ կետի «ա» ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«ա) ունի բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ վարչական կամ հայեցողական կամ ինքնավար պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ.»;

2) 11-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«11. Բաժնի գլխավոր մասնագետը՝

ա) բաժնի պետի հանձնարարությամբ մասնակցում է «Քաղաքաշինության մասին» և «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքներով ու այլ օրենքներով, այլ իրավական ակտերով վարչական շրջանի ղեկավարին քաղաքաշինության և հողօգտագործման ոլորտում վերապահված լիազորությունների իրականացմանը.

բ) ուսումնասիրում և համապատասխան ընթացք է տալիս քաղաքացիների՝ իրենց սեփական հողատարածքներում բնակելի տների, այլ օժանդակ շինությունների վերաբերյալ դիմումներին.

գ) համապատասխան ընթացք է տալիս քաղաքաշինական խնդիրների հետ կապված դիմումներին ու գրություններին.

դ)ներկայացնում է քաղաքաշինական կառուցապատման վերաբերյալ համապատասխան տեղեկանքներ ու հաշվետվություններ.

ե) ներկայացնում է վարչական շրջանի քաղաքաշինական խնդիրների վերաբերյալ տեղեկատվություններ.

զ) վերահսկողություն է իրականացնում վարչական շրջանի սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման և հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ.

է)Բաժնի պետի հանձնարարությամբ վարչական շրջանի սահմաններում կանխարգելում, կասեցնում և վերացնում է ապօրինի հողօգտագործումները.

ը) սահմանված կարգով վերահսկողություն է իրականացնում շենքերի ու շինությունների նպատակային օգտագործման և պահպանման, կառուցապատողներին տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքով, քաղաքաշինական կանոնադրությամբ սահմանված պահանջների կատարման նկատմամբ.

թ) կատարում է բաժնի պետի հանձնարարությունները՝ ժամանակին և պատշաճ որակով.

ժ) իր կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի, ծրագրային փաստաթղթերի և նյութերի փորձաքննության ուղարկելու անհրաժեշտության մասին առաջարկություններ է ներկայացնում բաժնի պետին.

ժա)անհրաժեշտության դեպքում՝ բաժնի պետի համաձայնությամբ կամ հանձնարարությամբ, մասնակցում է համապատասխան տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների կողմից կազմակերպվող քննարկումներին ու այլ միջոցառումներին.

ժբ)անհրաժեշտության դեպքում, իր լիազորությունների սահմաններում, նախապատրաստում և բաժնի պետին է ներկայացնում առաջարկություններ, տեղեկանքներ, հաշվետվություններ, միջնորդագրեր, զեկուցագրեր ու այլ գրություններ.

ժգ) իրականացնում է քաղաքացիների դիմում-բողոքների սահմանված կարգով քննարկումը և արդյունքները ներկայացնում բաժնի պետին.

ժդ) իրականացնում է սույն պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Բաժնի գլխավոր մասնագետն ունի օրենքով, իրավական այլ ակտերով նախատեսված այլ իրավունքներ և կրում է այդ ակտերով նախատեսված այլ պարտականություններ:»:

2. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը վերապահել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարին:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ